Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սիրելի ժողովուրդ հայոց ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռս:

Ուրախության և մխիթարության զգացումով են համակված այսօր մեր բոլորի սրտերը: Ողեկոչում ենք Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումը, որ նվիրագործված է Սարդարապատում, Բաշ Ապարանում և Ղարաքիլիսայում մեր ժողովրդի մղած Մայիսյան հերոսամարտերի նվիրական ու պանծալի հիշատակներով:

Այսօր վերստին անկախ է մեր Հայրենիքը: Մայիսյան փառապանծ հաղթանակներով փրկված հայրենի փոքրիկ հողի վրա մեր ժողովուրդն ապրում է իր ազատ նոր կյանքը, շենացնում Հայրենիքը, առ Աստված նույն հավատով և առ հայրենին նույն սիրով մարմնավորում միացյալ ու պայծառ ազգային մեր կյանքի իղձերն ու ձգտումները:

Օրհնությու՛ն և փա՛ռք ազատասեր ու խաղաղասեր մեր ժողովրդին, հարատև աղո՛թք և խոնարհո՛ւմ՝ հանուն Հայրենյաց նահատակված մեր բոլոր հերոսներին:

Թող Աստված օրհնի և խաղաղ պահի հայրենի մեր երկիրը՝ Իր բյուր շնորհներով զորացնելով և միաբանելով աշխահասփյուռ ազգս հայոց՝ ի բարօրություն և ի փառս մեր Հայրենիքի և ի պայծառություն մեր Սուրբ Եկեղեցու: Ամեն:

Ս. Էջմիածին,
28 մայիսի 2007 թ.